ԻՊԱՍ ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

2020

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ն ներկայացնում է 2020 թ.-ի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունը:

Սույն տարեկան հաշվետվության մեջ ներկայացված են կազմակերպության կողմից իրականացված ծրագրերի և նախաձեռնությունների շրջանակներում իրականացված գործողություններն ու դրանց արդյունքները, մարդու իրավունքների խախտումների դեպքերի արձանագրումը, փաստագրումը և պաշտպանությունը:

Ներկայացված են նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում տարբեր ձևաչափերի միջոցառումներին կազմակերպության մասնակցությունը, ինչպես նաև ներգրավվածությունը դիտորդական խմբերում և աշխատանքային խմբերում:

Հաշվետվության մեջ ամփոփված են նաև կազմակերության կողմից 2020 թ.-ին պատրաստված այլընտրանքային կարծիքները, վերլուծությունները, տեղեկանքները, հաշվետվությունները, զեկույցները, հետազոտությունները, ուսումնասիրությունները:

Մշտադիտարկումներ

- ✓ **Վարչական գործերով դատավարությունների մշտադիտարկում**

Վարչական գործերով դատավարությունների մշտադիտարկում և դատական ակտերի ուսումնասիրություն ՀՀ վարչական դատարանում՝ հանրային կառավարման և վարչական արդարադատության խնդիրների ուսումնասիրության նպատակով:

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դեմ հայցադիմումների առնչությամբ կայացված դատական ակտերը՝ նպատակ ունենալով վեր հանել հանրային կառավարման մարմինների կողմից իրականացվող վարչարարության և վարչական արդարադատության խնդիրները և մշակել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Ուսումնասիրվել են 13 պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դեմ ներկայացված հայցադիմումներով կայացված ընդհանուր առմամբ 1380 դատական ակտեր:

Մշտադիտարկման արդյունքները, արձանագրված խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները ներկայացնող զեկույցը գտնվում է պատրաստման փուլում:

Նշված գործունեությունը 2019թ. կազմակերպության կողմից իրականացրած նմանատիպ նախաձեռնության շարունակությունն է, որն առաջին ծրագիրն էր Հայաստանում, որտեղ միաժամանակ թիրախավորվել են հանրային կառավարման համակարգն ու վարչական արդարադատության ոլորտը:

Կազմակերպության կողմից իրականացվել է նաև ուսումնասիրություն ՀՀ վարչական դատարանում դատական գործերի քննությունն արտակարգ դրության պայմաններում թեմայով:

- ✓ **Բարձրագույն դատական խորհրդի գործունեության**

Բարձրագույն դատական խորհրդի գործունեության մշտադիտարկում, որի նպատակն է ապահովել դատարանների ու դատավորների անկախությունը և բարձրացնել դատական իշխանության ու վերջինիս առնչվող բարեփոխումների արդյունավետությունը: Նշված գործունեությունը 2018թ. կազմակերպության կողմից իրականացրած նմանատիպ նախաձեռնության շարունակությունն է:

Կազմակերպության կողմից իրականացվել է դատական իշխանության բյուջեի ձևավորման և կառավարման ուսումնասիրություն, դատավորների ընտրության, այդ թվում՝ ընտրությունների կարգի, դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջների, բարեվարքության գնահատում և այլն:

Ուսումնասիրության են ենթարկվել դատավորների կարգապահական պատասխանատվության հարցերը և Բարձագույն դատական խորհրդի կողմից դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումները: Կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների ուսումնասիրությունը իրականացվել է երկու փուլով, մինչև 2020թ. մարտի 25-ին ընդունված և մայիսի 2-ին ուժի մեջ մտած ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի փոփոխությունները և դրանից հետո գործող կարգավորումների լույսի ներքո: Զեկույցները պատրաստման ու վերջնականացման փուլում են:

Դատավորների թեկնածուների քաղաքացիական, քրեական և վարչական մասնագիտացման բաժինների հերթական և արտահերթ համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննությունների դիտորդություն: Դիտորդության արդյունքները ամփոփվել են 2020 թվականի փետրվարի 20-ին հրապարակված՝ **Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման որակավորման քննությունների դիտարկում** հաշվետվության մեջ:

2020 թվականի հուլիսի 17-ին հրապարակվել է **ՀՀ վարչական դատարանում ՀՀ բարձրագույն դատական խորհրդի դեմ գործերի մշտադիտարկում** զեկույցը:

- ✓ **Քննչական կոմիտեի գործունեության մշտադիտարկում**

ՀՀ քննչական կոմիտեի գործունեության առանձին ուղղությունների, այդ թվում՝ քննիչների ընտրության և նշանակման կարգավորումները և կարգը, քննիչների կարգապահական պատասխանատվության որոշումները, ռեսուրսների կառավարման, գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ուսումնասիրություն, ինչպես նաև նախաքննության ընթացքում մարդու իրավունքների պաշտպանության ապահովման ուսումնասիրության, քննչական կոմիտեի գործունեության այլ հարցեր: Նպատակն է ապահովել ՀՀ քննչական կոմիտեի ինստիտուցիոնալ անկախությունը, գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, արդյունավետությունն ու արդար դատաքննության չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև հանրային վստահությունը:

- ✓ **COVID-19 համավարակի ընթացքում ազատությունից զրկելու և ազատազրկմանն այլընտրանքային միջոցների և պատիժների կիրառման ուսումնասիրություն:**

COVID-19 համավարակի ընթացքում կալանավորումն այլ խափանման միջոցով փոխարինելու վերաբերյալ միջնորդությունների քննության վերաբերյալ դատարանների որոշումների ուսումնասիրություն:

- ✓ **Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական բնակչության դեմ Ադրբեջանի զինված ուժերի կողմից միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների փաստագրում**

Կազմակերպությունը գործընկեր հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացնում է փաստահավաք առաքելություն, որի նպատակն է Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության բնակավայրերի և խաղաղ բնակչության նկատմամբ իրականացվող թիրախային հարձակումների, մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների մանրամասն փաստագրումը և դրանց վերաբերյալ համապարփակ զեկույցի կազմումը: Տեղեկատվության հավաքագրման նպատակով կազմակերպության աշխատակիցները եռօրյա այցով գտնվել են Արցախի Հանրապետությունում:

Կազմակերպությունը, ինչպես անհատական նախաձեռնությամբ, այնպես էլ այլ իրավապաշտպան կազմակերպությունների հետ համատեղ, պատրաստել է մի շարք հայտարարություններ՝ ուղղված ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին, ՄԱԿ մարդու իրավունքների հատուկ զեկուցողներին՝ խոշտանգումների, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի, կյանքի իրավունքի, խտրականության հարցերով, Եվրոպայի խորհրդին, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարին և ԵԽ խորհրդարանական վեհաժողովին, ՅՈՒՆԵՍԿՕ-ին, տարբեր պետությունների ազգային ժողովների ներկայացուցիչներին՝ Ադրբեջանի կողմից Արցախի

Հանրապետության դեմ սանձազերծած պատերազմի ընթացքում ծագած հրատապ խնդիրներին և մարդու իրավունքների կոպիտ խախտումներին արձագանքելու և իրենց մանդատի ներքո դրանց լուծմանը միջամտելու կոչով:

ԻՊԱՍ հայտարարություններ

- ՀՀ քաղաքացիական հասարակությունը դիմել է ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարին և ԵԽ խորհրդարանական վեհաժողովին՝ Արցախում Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների խախտումների առնչությամբ
- Գործողության հրատապ կոչ ՄԱԿ-ի զեկուցողներին
- Կոչ՝ ուղղված մարդու իրավունքների միջազգային հանրությանը Ադրբեջանի կողմից գործած վայրագությունները բարձրաձայնելուն
- Անհապաղ գործողության պահանջ՝ Ադրբեջանի զինված ուժերի կողմից հայ քաղաքացիական բնակչության և զինվորների նկատմամբ գործած մահապատիժների, խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի առթիվ
- ԿՈՉ Հայ ռազմագերիների և քաղաքացիական անձանց փոխանակելու, ինչպես նաև ադրբեջանական կողմից զինվորականների և քաղաքացիական անձանց աճյունները վերադարձնելու ուղղությամբ անհապաղ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտության մասին
- Այլընտրանքային զեկույց է ներկայացվել ՄԱԿ-ի Խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեին Ադրբեջանում հայերի նկատմամբ խտրականության պետական քաղաքականության, այդ հիմքով մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ:
- Ներկայացվել է զեկույց Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովին Ադրբեջանում հայերի նկատմամբ խտրականության, հայատյացության պետական քաղաքականության վերաբերյալ:

Իրավաբանական խորհրդատվություն և ներկայացուցչություն

2020թ. ընթացքում իրավաբանական օգնություն է տրամադրվել քաղաքացիներին վարչական, քաղաքացիական և քրեական ոլորտներում, այդ թվում՝ իրավախորհրդատվություն, ներկայացուցչություն և պաշտպանություն: Միայն 2020թ. խորհրդատվություն է տրամադրվել ավելի քան 150 անձի, որից 40-ը՝ գրավոր, ինչպես նաև կազմվել են 130-ից ավելի իրավաբանական բնույթի փաստաթղթեր: Բացի նշված անձանցից, կազմակերպությունը շարունակել է իրավական աջակցություն տրամադրել անձանց մի շարք գործերով, որոնց առնչությամբ գործերի քննությունը 2020թ. դրությամբ ավարտված չի եղել: Ընդհանուր առմամբ Կազմակերպության իրավաբանները 2020թ. իրավախորհրդատվության շրջանակներում կազմել են շուրջ 285 իրավաբանական փաստաթուղթ, այդ թվում՝

- գրավոր խորհրդատվություն՝ 40
- դիմումներ, հարցումներ վարչական մարմիններին և հանրային նշանակության կազմակերպություններին՝ 79
- վերադասության կարգով բողոքներ վարչական մարմիններին՝ 10
- քրեական գործերով հաղորդումներ, միջնորդություններ, բողոքներ՝ 30
- հայցադիմումներ, դիմում սնանկության դատարան՝ 31

- Դատավարական փաստաթղթեր / հայցադիմումի պատասխան, առարկություն, դիրքորոշում և այլն/՝ 68
- Վերաքննիչ բողոքներ՝ 18
- Վճռաբեկ բողոքներ՝ 9

<u>Իրավախորհրդատվության ընթացքում ՀՀ քաղաքացիների կողմից առավել հաճախ բարձրաձայնված խնդիրներ ու հարցեր</u>

- սեփականության իրավունքի պաշտպանության, այդ թվում՝ ժառանգության իրավունքի վերաբերյալ հարցեր,
- աշխատողների իրավունքների վերաբերյալ հարցեր, այդ թվում՝ պայմանավորված արտակարգ դրությամբ,
- արտակարգ դրությամբ պայմանավորված սահմանափակումների, արտակարգ դրության կանոնների պահպանման վերաբերյալ հարցեր,
- սոցիալական ապահովության իրավունք. կենսաթոշակ ստանալու, հաշմանդամության կարգերի սահմանման, հաշմանդամության նպաստի տրամադրման վերաբերյալ հարցեր,
- ընտանեկան իրավահարաբերություններից բխող վեճերի հետ կապված հարցեր,
- անձի պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանության հետ կապված հարցեր,
- խոսքի ազատության պաշտպանության վերաբերյալ հարցեր,
- բանկային սպասարկման ոլորտում խտրականության դրսևորումների վերաբերյալ հարցեր,
- քաղաքացիություն ստանալու, օտարերկրացիների կողմից ՀՀ-ում առանց վավերական արտոնագրի կամ կացության կարգավիճակի բնակվելու, կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ հարցեր,
- կամավոր սնանկության վարույթի վերաբերյալ հարցեր,
- բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում անձի կյանքին և առողջությանը պատճառված վնասների հետ կապված հարցեր,
- պետական մարմինների կողմից ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում (այդ թվում՝ ազատ տեղաշարժի, անձնական անձեռնմխելիության, հավաքների ազատության իրավունքի խախտմամբ) պատճառված վնասների հատուցման վերաբերյալ հարցեր,
- անձի անձնական անձեռնմխելիության իրավունքը խախտելով դրսևորված քրեական մարմնի գործունեությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի վերաբերյալ հարցեր,
- արտոնագրային իրավունքի տրամադրման, պետական մարմնի կողմից արտոնագրային իրավունք չտրամադրելու արդյունքում պատճառված վնասի հատուցման վերաբերյալ հարցեր,
- պետական մարմիններից պահանջվող տեղեկությունների ստացմանը՝ տեղեկատվության ազատությանը վերաբերող հարցեր,
- զինվորական ծառայության անցնելու, ծառայությունից ազատման հիմքերի վերաբերյալ հարցեր,
- և այլն։

ՄԻԵԴ գործեր

- 2020թ. մայիսի 7-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հրապարակել է զինծառայող Արայիկ Ավետիսյանի սպանությանն առնչվող գործով վճիռը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Անահիտ Մկրտչյանն ընդդեմ Հայաստանի վճռով գտել է, որ Հայաստանի Հանրապետությունը խախտել է զինծառայող Արայիկ Ավետիսյանի սպանության գործով արդյունավետ քննության պարտականությունը: Արձանագրված խախտումների համար ՄԻԵԴ-ը Հայաստանի Հանրապետությանը պարտավորեցրել է Դիմումատուին վճարել 24000 եվրո՝ որպես բարոյական վնասի փոխհատուցում:

Խաղաղ հավաքների ընթացքում հավաքի մասնակիցների իրավունքների զանգվածային խախտումներ.

- Կազմակերպությունը ստանձնել է 2015թ. հունիսի 23-ին (Էլեկտրիկ Երևան), 2016թ. հուլիսի 17-30-ը («Հուլիսյան դեպքեր»), 2018թ. ապրիլի 16-23-ը («Թավշյա հեղափոխություն»), 2020թ. օգոստոսի 16-23-ը Հայաստանում տեղի ունեցած խաղաղ հավաքների ընթացքում մարդու իրավունքների խախտումների հետևանքով տուժած քաղաքացիների շահերի պաշտպանությունը: Հարկ է նշել, որ նշված դեպքերի առնչությամբ հարուցված քրեական գործերը կասեցվել են 2-3 անգամ, որոնց վերաբերյալ որոշումները յուրաքանչյուր անգամ բողոքարկվել են դատախազություն, այնուհետև՝ դատական կարգով:

Հատկանշական է, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ երեք քրեական գործերի վարույթն էլ կասեցվել է «որպես մեղադրյալ անձը հայտնի չլինելու» պատճառաբանությամբ:

- Բացի դատական բողոքարկումներից, այս իրադարձությունների ընթացքում մարդու իրավունքների զանգվածային, համակարգային խախտումների և դրանց արդյունքում տուժած անձանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների շուրջ խորհրդարանական լսումներ կազմակերպելու առաջարկով դիմում է ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի նախագահին, խորհրդարանական խմբակցություններին, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին, Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին, ՀՀ Կառավարությանը, Մարդու իրավունքների պաշտպանին: Սակայն Ազգային ժողովի իրավասու մարմիններին ուղղված դիմումով առաջարկվող գործողությունների կապակցությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել, և դիմումին պատասխանել է միայն պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը՝ դիմումն ի գիտություն ընդունելու մասին հայտարարությամբ: Նման պատասխանի դեմ 2020 թվականի հունվարի 31-ին Կազմակերպության փաստաբանները հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ հանրային լսումներ նախաձեռնելուն և իրականացնելուն պարտավորեցնելու պահանջով՝ ՀՀ Վարչական դատարանը մերժել է հայցադիմումի ընդունումը՝ գտնելով, որ Ազգային ժողովի նախագահը չի հանդիսանում վարչական մարմին, և ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից խորհրդարանական լսումներ նախաձեռնելը վարչարարություն չի հանդիսանում: ՀՀ վարչական դատարանի որոշումը բողոքարկվել է վերաքննության, այնուհետև՝ վճռաբեկության կարգով:

➢ ՀՀ արդարադատության նախարարին ներկայացվել են առաջարկություններ ՀՀ-ում տեղի ունեցած բողոքի ցույցերի և հավաքների, և մասնավորապես 2015թ. 2016թ. և 2018թ. իրադարձությունների շրջանակներում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումները ստեղծվելիք Փաստահավաք հանձնաժողովի մասին օրենքի նախագծով առաջարկվող քննության առարկա ոլորտներում ներառելու վերաբերյալ՝ տուժողների իրավունքների պաշտպանության և վերականգնման հանցագործություն կատարած անձանց բացահայտման, ինչպես նաև ապագայում նման հանցագործությունների և անձանց իրավունքների խախտումների բացառման երաշխավորման նպատակով: Արդարադատության նախարարության պատասխանով հայտնվել է, որ ՀՀ Փաստահավաք հանձնաժողովի մասին օրենքների նախագծերը գտնվում են շահագրգիռ մարմինների, շահառուների հետ քննարկումների և լրամշակման փուլում և կազմակերպության կողմից ներկայացված առաջարկությունները կքննարկվեն նախագծերի լրամշակման ընթացքում:

<u>2020թ. Օգոստոս. Ամուլսարի հետ կապված դեպքերը</u>

Մի խումբ բնապահպաններ, Ջերմուկի, Գնդեվազի, Վայոց ձորի մարզի այլ բնակիչներ շուրջ երկու տարի խաղաղ հավաքների, ակցիաների միջոցով պայքարում են «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող հանքարդյունաբերական ծրագրի դեմ:
2020թ.-ի օգոստոսի 5-ին և 6-ին հերթական խաղաղ հավաքի մասնակիցները ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից ենթարկվել են ֆիզիկական բռնության և կիրառվել են հարկադրանքի անհամաչափ միջոցներ, անձանց ազատությունը սահմանափակվել է ոստիկանության օրինական պահանջներին չենթարկվելու հիմքով: Կազմակերպության կողմից իրականացվել է քաղաքացիների ներկայացուցչություն ինչպես քրեական, այնպես էլ վարչական վարույթների շրջանակներում, շարունակվում է տրամադրվել իրավաբանական աջակցություն:

<u>Տեղեկատվության ազատության իրավունք</u>

Դատարան է ներկայացվել 4 հայցադիմում ընդդեմ տարբեր պետական մարմինների՝ քաղաքացիների, ինչպես նաև Կազմակերպության՝ որպես հանրային վերահսկողի գործառույթ իրականացնողի տեղեկատվության ազատության իրավունքը վերականգնելու պահանջով:

➢ Դատարանի կողմից մասնակիորեն բավարարվել է ՀՀ արդարադատության նախարարության դեմ ներկայացված հայցը, որով պահանջվել էր պարտավորեցնել ներման խնդրագրով դիմած անձանց վերաբերյալ տվյալներ տրամադրել՝ պատճառաբանելով, որ պահանջվող տվյալները համարվում են անձնական բնույթի գաղտնիք և ԱՆ-ին պարտավորեցվել է տրամադրել միայն քանակական տվյալները: Վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով:
➢ Դատարանի կողմից մերժվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության դեմ ներկայացված հայցը՝ տրամադրելու ԱԻՆ աշխատակիցների կողմից Կազմակերպության դուռը կոտրելու և գրասենյակ մուտք գործելու գործընթացի տեսաձայնագրությունը՝ այն պատճառաբանությամբ, որ հարցվող տեղեկությունը տրամադրելը հնարավոր չէ՝ տեսաձայնագրության բացակայության հիմքով: Վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով, այնուհետև վճռաբեկության կարգով:
➢ Ֆ. Հ.-ի իրավահաջորդի կողմից համապատասխան բժշկական հաստատություններ ներկայացվել են տեղեկատվություն ստանալու վերաբերյալ հարցումներ Ֆ. Հ.-ի առողջական վիճակի վերաբերյալ, որին պատասխան գրությամբ մասնավոր բուժհաստատությունից տեղեկացվել է, որ հայցվող տեղեկատվությունը հանդիսանում է բժշկական գաղտնիք:

Բուժհաստատության, ինչպես նաև վերջինիս նկատմամբ վերահսկողություն իրականացնող՝ ՀՀ առողջապահության նախարարության դեմ ներկայացվել է տեղեկություն տրամադրելուն պարտավորեցնելու վերաբերյալ հայց ՀՀ վարչական դատարան:

➢ Քաղաքացի Լևոն Բարսեղյանը 2020 թվականի հունվարի 13-ին տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ խնդրելով տրամադրել իր մասին Ազգային անվտանգության ծառայության կողմից տիրապետվող և ունեցած բոլոր տեղեկությունները: Ազգային անվտանգության ծառայության կողմից մերժվել է տեղեկությունների տրամադրումը այն հիմքով, որ նշվածը հանդիսանում է պետական գաղտնիք: Կազմակերպության իրավաբանները հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան կատարված հարցմամբ պահանջված տեղեկությունները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին: ՀՀ վարչական դատարանը 01.10.2020 թվականի վճռով մերժել է հայցը: Վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով:

Վարչական մարմնի կողմից անձի ազատության սահմանափակման անոնչությամբ գործեր.

Նշված դեպքերի առնչությամբ 2016թ. հուլիսի 17-ին՝ ժամը 10:29-ից մինչև 14:10-ն սահմանափակվել է Լ. Բարսեղյանի ազատ տեղաշարժի իրավունքը, որի ընթացքում նրան չի տրամադրվել իրավական օգնություն և իր իրավունքներից օգտվելու հնարավորություն, ինչի առնչությամբ Կազմակերպության ներկայացուցիչները, ի լրումն քրեական գործերի, դիմել են Վարչական դատարան՝ Ոստիկանության գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով: 2020 թ. փետրվարի 17-ին ՀՀ վարչական դատարանը վճիռ է կայացրել՝ բավարարելով Լևոն Բարսեղյանի հայցը: Վճռի դեմ ՀՀ ոստիկանության կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք:

<u>Ոչ նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ գործեր</u>

➢ 2018թ. ապրիլին տեղի ունեցած ընթացքում զանգվածային անկարգություններ կազմակերպելու, դրանց մասնակցելու կասկածանքով ձերբակալված քաղաքացիների անունից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմ Ֆինանսների նախարարության, երեք հայցադիմում է ներկայացվել դատարան՝ ոչ իրավաչափ ձերբակալման հետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցման պահանջի մասին:

- Գործերից մեկով Դատարանը մասնակիորեն բավարարել է հայցը՝ վճռելով Հայաստանի Հանրապետությունից՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, հօգուտ հայցվորի բռնագանձել 150.000 ՀՀ դրամ՝ որպես ապօրինի ձերբակալման հետևանքով կրած ոչ նյութական վնասի փոխհատուցում:

-Գործերից մեկով հայցը թողնվել է առանց քննության, ինչը բողոքարկվել է վերաքննության կարգով:

Դեռևս 2018 թվականի հոկտեմբերի 2-ին ՀՀ վարչական դատարանը հաստատել էր, որ ոստիկանության աշխատակիցների կողմից 2016 թվականի հունվարի 21-ին ՀՀ նախագահի նստավայրի մոտ խախտվել էր Հայկուհի Հարությունյանի ազատ տեղաշարժի իրավունքը: Ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում Հայկուհի Հարությունյանին պատճառված բարոյական վնասը փոխհատուցելուն պարտավորեցնելու պահանջի մասին ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցը գտնվում է դատական քննության փուլում:

➢ 2013թ. դեկտեմբերի 2-ին Երևան քաղաքում լրագրող Թեհմինե Ենոքյանին մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում ՀՀ ոստիկանության

ծառայողների կողմից բերման ենթարկվելու առնչությամբ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումը 2019թ. նոյեմբերի 4-ի վճռով բավարարվել է՝ ճանաչելով լրագրողի անձնական ազատության իրավունքի սահմանափակման և լրագրողական գործունեության ժամանակավոր սահմանափակման փաստը: Կազմակերպության իրավաբանները դիմել են Վարչական դատարան՝ Թեհմինե Ենոքյանին ՀՀ ոստիկանության կողմից պատճառված վնասը հատուցելու պահանջով: Գործը գտնվում է դատական քննության փուլում:

➢ 2019 թվականի նոյեմբերի 5-ին հայցադիմում էր ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ մտավոր սեփականության գործակալության՝ վերջինիս արտոնագրային իրավունքները խախտելու հիմքով ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հայցվորին պատճառված ոչ նյութական և նյութական վնասների համար փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու պահանջով: Դործը գտնվում է դատական քննության փուլում:

➢ Դեռևս 22.05.2017թ. Վարչական դատարանը վճռով հաստատել էր քաղաքացի Լ. Մ.-ի նկատմամբ հաշմանդամություն չսահմանելու մասին որոշման ոչ իրավաչափ լինելու հանգամանքը: Հիմնվելով նշված հանգամանքի վրա՝ Կազմակերպության իրավաբանները դիմել են վարչական մարմին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որի արձագանքը չստանալուց հետո նաև ՀՀ վարչական դատարան՝ հաշմանդամության կարգ չսահմանելու արդյունքում վերջինիս պատճառված վնասների հատուցման պահանջով: Գործը գտնվում է դատական քննության փուլում:

<u>Պատվի և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին գործեր</u>

➢ Կազմակերպության իրավաբանները ներգրավված են զրպարտության և վիրավորանքի հիմքով պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջներով 4 դատական գործերում՝ ներկայացնելով ինչպես հայցվորների, այնպես էլ պատասխանողների շահերը:

<u>Արտակարգ դրության ժամանակահատվածում հաստատված սահմանափակումների առնչությամբ գործեր.</u>

➢ Արտակարգ դրության ժամանակահատվածում հաստատված սահմանափակումները չպահպանելու, մասնավորապես՝ դիմակ չկրելու կամ ոչ պատշաճ կրելու համար վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներ են կայացվել մի շարք քաղաքացիների նկատմամբ: Կազմակերպության իրավաբանների կողմից նշված որոշումները բողոքարկվել են ինչպե՛ս վերադասության (ՀՀ ոստիկանության պետին), այնպե՛ս էլ դատական կարգով: Արդյունքում, արդեն առկա են ամբողջությամբ բավարարված վերադասության կարգով ներկայացված երկու բողոքներ: Իսկ ներկայացված դատական հայցերի առնչությամբ ընթանում է դատական քննություն:

<u>Բանկային սպասարկման ոլորտում խտրականությունից զերծ մնալու վերաբերյալ գործեր</u>

➢ Դեռևս 2019 թ. դեկտեմբերին Կազմակերպության իրավաբանները 4 անձանց անունից հայցադիմումներ են ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ ՀՀ-ում գործող բանկերի՝ նրանց նկատմամբ դրսևորված խտրականության փաստի ճանաչման և պատճառված բարոյական վնասի փոխհատուցման պահանջով: Բանկերի

կողմից ծառայությունների մատուցումը մերժվել է՝ հիմք ընդունելով անձանց Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի լինելու հանգամանքը: 2020թ.դեկտեմբերի դրությամբ նշված գործերով դատական քննությունը շարունակվել է:

Սոցիալական ապահովության իրավունքի վերաբերյալ գործեր.

➢ Հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության Քանաքեռ-Զեյթունի տարածքային բաժնին, Հայցվորին՝ Ա.Մ.-ին նշանակել տարիքային աշխատանքային կենսաթոշակ՝ սկսած 02.07.2018 թվականից՝ վերջինիս աշխատանքային ստաժում ներառելով նաև աշխատանքային գրքույկում առկա այն տվյալները, որոնց վերաբերյալ ազգային արխիվում տեղեկություններ չկան՝ հաշվի առնելով, որ Հայցվորը աշխատանքային գրքույկում առկա տեղեկություններին վստահելու իրավունք ունի: Դատարանի 09.12.2020թ. վճռով հայցը բավարարվել է, որով հաստատվել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը իրականացրել է սխալ վարչարարություն և պարտավորեցրել է վերջինիս 2018 թվականից սկսած՝ հաշվարկել և տրամադրել հայցվորի կենսաթոշակը:

➢ Կազմակերպության ներկայացուցիչները դատական կարգով վիճարկել են շահառուի նկատմամբ հաշմանդամության 3-րդ կարգ սահմանելու մասին որոշումը՝ պնդելով, որ անձի առողջական վիճակը սխալ է գնահատվել վարչական մարմնի կողմից: Գործը գտնվում է դատական քննության փուլում:

Աշխատանքային իրավունքների վերաբերյալ գործեր.

➢ 4 գործով հայցադիմումներ են ներկայացվել Դատարան՝ քաղաքացիների աշխատանքային իրավունքների խախտման հիմքով: Մասնավորապես տարբեր դատական գործերի շրջանակներում քննարկվում են այս խումբ խնդիրները.

- երեխայի խնամքի համար տրամադրված արձակուրդում գտնվելու ընթացքում Երևան համայնքի կողմից անձի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու հանգամանքների վերաբերյալ
- չնորմավորված ռեժիմով աշխատող անձանց իրավունքները սահմանափակելու, վերջիններիս աշխատանքի (հերթափոխային) ժամանակացույցները չտրամադրելու և աշխատանքի ներկայանալը խոչընդոտելու վերաբերյալ
- քաղաքացու նկատմամբ միաժամանակ 3 չհիմնավորված կարգապահական տույժ նշանակելու և այդ հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու և աշխատանքից ազատելու վերաբերյալ:

Պատշաճ վարչարարության իրականացում.

Ի թիվս այլնի, Կազմակերպության ներկայացուցիչների կողմից հայցադիմումներ են ներկայացվել Վարչական դատարան՝ հողահատկացման հիմքերի, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման, ինքնակամ կառույցների օրինականացման հարցերով:

➢ Հարկ է նշել, որ մեկ գործով Դատարանը 13.11.2020թ. վճռով հաստատել է վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների չարաշահումը և բավարարել է հայցվորի պահանջը՝ հողամասի և տաղավարի հատկացման վերաբերյալ: Մեկ այլ գործ՝ կապված կրկին

հայեցողական լիազորությունների չարաշահման և կամայականության արգելքի սկզբունքների խախտման հետ, գտնվում է քննության փուլում:

➢ Եվս մեկ գործով, որով Կազմակերպության ներկայացուցիչները վիճարկել են Համայնքի ղեկավարի որոշումը՝ շահառուին պատկանող ավտոտնակից չթույլատրված հեռավորության վրա գտնվող ինքնակամ շինությունն օրինականացնելու վերաբերյալ, ընթանում է դատական քննություն:

<u>Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների վիճարկում</u>

➢ ՀՀ ԱՆ Նուբարաշեն և Երևան-Կենտրոն քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կողմից 2017 թվականի ապրիլի 2-ին Հասարակական դիտորդական խմբի անդամ Հասմիկ Հարությունյանին քրեակատարողական հիմնարկներ մուտք գործելն արգելելու առնչությամբ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումները 2019թ. սեպտեմբերի 19-ի վճիռներով բավարարվել են՝ ճանաչելով Հասմիկ Հարությունյանի մասնագիտական գործունեության ոչ իրավաչափ սահմանափակման փաստը: Դատական վճիռները բողոքարկվել են վերաքննության կարգով ՔԿՀ-ների կողմից:

<u>Ատելության խոսքից զերծ մնալու իրավունք.</u>

➢ Ֆեյսբուքյան օգտատերը իր էջում տարածել է քաղաքացուն ուղղված ատելության խոսք, բռնության կոչ՝ պայմանավորված որոշ կազմակերպությունների հետ վերջինիս առնչությամբ: Կազմվել է հանցագործության մասին հաղորդում: Քրեական գործի հարուցումը մերժվել է: Որոշումը բողոքարկվել է դատախազություն, այնուհետև՝ դատարան: Գտնվում է դատական քննության փուլում:

➢ ՀՀ քրեական օրենսգրքի նոր լրացված՝ 226.2 հոդվածի հատկանիշներով հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազին՝ ֆեյսբուք սոցիալական կայքում օգտատերերից մեկի կողմից բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու և քարոզելու առնչությամբ: Հետաքննիչի կողմից որոշում է կայացվել նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին: Որոշումը բողոքարկվել է ՀՀ դատախազություն: Դատախազի կողմից որոշում է կայացվել ներկայացված բողոքը մերժելու և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման օրինականությունը հաստատելու մասին: Նշված որոշումների դեմ բողոք է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան: Գործը գտնվում է դատական քննության փուլում:

<u>Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետ կապված հարցեր,</u>

➢ Սխալ վիրահատական միջամտության արդյունքում քաղաքացու մոտ առաջացել են առողջական խնդիրներ՝ կապված աչքի տեսողության կորստի հետ: Ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում: Հետաքննիչի որոշմամբ քրեական գործ հարուցելը մերժվել է: Դատախազության կողմից հետաքննիչի որոշումը վերացվել է և քրեական գործ հարուցվելու մասին որոշում է կայացվել: Գործն ուղարկվել է քննչական վարչություն: Գործը գտնվում է նախաքննության փուլում:

- **Քրեական գործ Կորոնավիրուսով պայմանավորված պատշաճ բժշկական բուժօգնություն չտրամադրելու հիմքով**

  2020թ. սեպտեմբերի 18-ին, Ֆ.Հ.-ի իրավահաջորդ Ա.Հ.-ի կողմից Կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված պատշաճ բժշկական բուժօգնություն չտրամադրելու հիմքով հանցագործության մասին հաղորդում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն:
  Պատշաճ բժշկական օգնության բացակայությունը հանգեցրել է մասնավորապես Ֆ. Հ.-ի առողջական վիճակի կտրուկ վատթարացմանը, և 2020թ. հուլիսի 4-ին Ֆ. Հ. մահացել է:
  Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության կողմից որոշում է կայացվել սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու և ընթացքը լուծելու վերաբերյալ: Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Էրեբունու բաժնի կողմից նախապատրաստված նյութերի հիման վրա հարուցվել է քրեական գործ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով:

Պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ գործեր

- Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ գործերից մեկով հայցադիմումին կից ներկայացվել է պետական տուրքի վճարումից ազատելու կամ պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ՝ այն հիմնավորմամբ, որ հայցվորները պետք է ազատված լինեն իրավունքի խախտման հետևանքով պատճառված վնասների փոխհատուցման վերաբերյալ հայցով պետական տուրք վճարելու պարտականությունից: Ներկայացված միջնորդությունը մերժվել է, իսկ հայցադիմումը՝ վերադարձվել, նման որոշումը բողոքարկվել է վերաքննության, այնուհետև՝ վճռաբեկության կարգով: ՀՀ վճռաբեկ դատարանը վարույթ է ընդունել ներկայացված բողոքը:
- *ՃՈ վարչական պատասխանատվության վերաբերյալ ակտերի բողոքարկում.*

Դեռևս 2019 թվականի տարեվերջին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարվեցին փոփոխություններ, որոնցով նախատեսվում է ՃՈ ակտերի պարտադիր վերադասության կարգով բողոքարկման կարգ և հայցադիմում ներկայացնելիս պետական տուրք վճարելու պարտականություն, ինչը Ազգային ժողովի պաշտոնական կայքում առկա տեղեկությունների համաձայն արվել է դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու նպատակով: Այս խումբ գործերից մեկով հայցադիմում է ներկայացվել դատարան, որը վերադարձվել է պետական տուրք վճարված չլինելու հիմնավորմամբ: Որոշումը բողոքարկվել է վերաքննության և վճռաբեկության կարգով, դիմում է ներկայացվել Սահմանադրական դատարան՝ նման կարգավորման հակասահմանադրական լինելու և դատարանի հասանելության իրավունքը սահմանափակելու վերաբերյալ:

Մասնակցություն և ներգրավվածություն

Կազմակերպության աշխատակիցները 2020թ. ընթացքում մասնակցել են տեղական և միջազգային կառույցների կողմից կազմակերպված մարդու իրավունքների տարբեր միջոցառումների: Հատկանշական են հատկապես հետևյալ միջոցառումները՝

2020թ. փետրվարի 22-ին կազմակերպության նախագահը, որպես բանախոս մասնակցել է «Ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թթ. ռազմավարության թույլ և ուժեղ կողմերը» թեմայով քննարկմանը:

2020թ.-ի մայիսի 20-21-ին կազմակերպության նախագահը և իրավական հարցերով փորձագետը, որպես զեկուցողներ մասնակցել են ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) տարեկան համաժողովին:

2020թ. մայիսի 28-ին կազմակերպության իրավական հարցերով փորձագետը մասնակցել է ՏՀԶԿ Հակակոռուպցիոն ցանցի (#OECD) վերահսկող հանձնաժողովի նիստին:

2020 թ. հունիսի 1-ին կազմակերպության նախագահը, որպես բանախոս մասնակցել է «Վեթինգ լինելու է, բայց ինչպե՞ս» թեմայով քննարկմանը:

2020թ. հուլիսի 30-ին «Սարի թաղի գործ. 4 տարի անց. ինչո՞ւ է նախաքննությունն դոփում տեղում» թեմայով քննարկմանը:

2020թ. օգոստոսի 31-ին կազմակերպության նախագահը մասնակցել է «Բարձրագույն դատական ատյանները սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում» թեմայով քննարկմանը:

2020թ. սեպտեմբերի 2-ին կազմակերպության իրավական հարցերով փորձագետ, ՀՀ ԱՆ քերակատարողական հիմնարկներում դիտորդական խմբի նախագահ Հասմիկ Հարությունյանը Մեդիա Կենտրոնում մասնակցել է «Պայքար քրեական ենթամշակույթի դեմ. ի՞նչ է կատարվում ՔԿՀ-ներում» թեմայով քննարկմանը:

2020թ. սեպտեմբերի 21-ին կազմակերպության նախագահը և իրավական հարցրեով փորձագետը մասնակցել են Վեթինգի հիմնական գաղափարը և դրա իրականացման անհրաժեշտությունը ՀՀ-ում թեմայով քննարկմանը:

2020թ. նոյեմբերին կազմակերպության նախագահը, որպես բանախող մասնակցել է #JustCovid ծրագրի առաջին տարածաշրջանային թողարկմանը, որի ընթացքում քննարկվել է, թե ինչպես է ոստիկանությունն արձագանքել կարանտինի և սոցիալական այլ սահմանափակումների ներդրմանը համավարակի առաջին ամիսների ընթացքում:

2020թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպության նախագահը, որպես բանախոս մասնակցել է Ժողովրդավարական արժեքների և մարդու իրավունքների պաշտպանության խնդիրների թեմայով քննարկմանը:

Ներգրավվածություն հասարակական խորհուրդների, դիտորդական խմբերի կազմում.

2020թ.-ի հուլիսի 1-ին ՀՀ արդարադատության նախարարի որոշման համաձայն՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ իրավաբան Նինա Հակոբյանը ընդգրկվել է «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի» համակարգող խորհրդի կազմում:

2020թ.-ի հուլիսի 31-ին կայացել է Դատավորների ընդհանուր ժողովը, որի ընթացքում քվեարկության արդյունքում իրավական հարցերով փորձագետ Հասմիկ Հարությունյանը ընտրվել է Դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի կազմում՝ որպես դատավոր չհանդիսացող անդամ:

2020թ.-ին կազմակերպության ծրագրերի համակարգող Աննա Մելիքյանը ընդգրկվել է Եվրոպայի խորհրդի և ՀՀ արդարադատության նախարարության կողմից համատեղ իրականացվող՝ «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության

ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում ձևավորված աշխատանքային խմբում:

Հրապարակումներ

Կազմակերպությունը, ինչպես անհատական նախաձեռնությամբ, այնպես էլ այլ իրավապաշտպան կազմակերպությունների հետ համատեղ, պատրաստել է այլընտրանքային կարծիքներ, վերլուծություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկույցներ, հետազոտություններ, ուսումնասիրություններ:

ԻՊԱՍ հրապարակումներ

Առաջարկներ ՀՀ ոստիկանության բարեփոխումների 2020-2022 թվականների ռազմավարության վերաբերյալ

Կարծիք «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ սահմանադրական օրենքի և հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ

Ուսումնասիրություն ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի առանձին դրույթների վերաբերյալ

Կարծիք «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծի վերաբերյալ

Հետազոտություն ՀՀ-ում արտակարգ դրության համատեքստում անձնական ազատության իրավունքի սահմանափակման իրավաչափություն

Ամփոփում Արտակարգ դրության ընթացքում աշխատանքային իրավահարաբերությունների շուրջ տրամադրված խորհրդատվության վերաբերյալ

Տեղեկանք «Արտակարգ դրության ազդեցությունը աշխատանքային և սոցիալական իրավունքների վրա և դրա հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումները»

Առաջարկներ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ

Այլընտրանքային զեկույց ուղղված Ռասայական խտրականության դեմ պայքարի կոմիտեին

Դիտարկումներ Արցախում հաշվառված քաղաքացիներին աջակցության միջոցառման և աջակցության տրամադրման կարգի վերաբերյալ

Տեղեկանք ռազմական դրության ժամանակահատվածում հայտարարված սոցիալական աջակցության վերաբերյալ

Համատեղ հրապարակումներ

Առաջարկներ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Առաջարկներ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի բարեփոխումների հայեցակարգը հաստատելու մասին Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Նկատառումներ եվ առաջարկներ «Հայաստանի Հանրապետության փաստահավաք հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի եվ հարակից օրենքների նախագծերի վերաբերյալ

Ինչ՞ է Վեթինգը-տեսանյութ

2019թ. մայիսին իշխանությունների կողմից բարձրաձայնվեց դատական համակարգում համընդհանուր վեթինգ իրականացնելու անհրաժեշտության մասին, ժամանակի ընթացքում կառավարությունը հրաժարվեց այդ քաղաքականությունից՝ հիմնականում ներկայացնելով վեթինգի բացասական հետևանքները Ալբանիայի փորձի հիման վրա:

Կազմակերպության կողմից պատրաստվել է **տեսահոլովակ,** որտեղ ներկայացնում է վեթինգի հիմնական գաղափարը, այլ պետությունների, և հատկապես՝ Ալբանիայի փորձն ու քաղած դասերը Հայաստանի Հանրապետությունում արդյունավետ վեթինգ իրականացնելու համար: